ԿԱՐԾԻՔ

ԳԱՅԱՆԵ ՌՈՒԲԻԿԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ «ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից աշխարհում զբոսաշրջությունը դարձել է տնտեսության ամենաարագ զարգացող ոլորտներից մեկը: Ներկայումս զբոսաշրջության համախառն ներդրումը համաշխարհային ՀՆԱ-ում գերազանցում է դրա 10 տոկոսը: Ոլորտը գործունեության ամենատարբեր ուղղությունների զարգացումը խթանելուց բացի, ապահովում է բավականաչափ մեծ զբաղվածություն: Այդ առումով բացառություն չի կազմում Հայաստանը, որը զբոսաշրջության ոլորտում, անշուշտ, ունի մեծ ռեսուրսային ներուժ: Սակայն ճանաչվածության տեսանկյունից միջազգային զբոսաշրջային շուկայում հանրապետությունը դեռևս ունի մի շարք խնդիրներ, կապված զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացման, ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարելավման, ենթակառուցվածքների արդիականացման, գործունեության տվյալ ոլորտի կադրերի կրթական մակարդակի բարձրացման, աշխատաշուկայի հետ կապերի ամրապնդման և ոլորտի գործունեությանն առնչվող այլ հարցերի լուծման հետ:

Հարկ է նշել, որ Հայաստանում զբոսաշրջության զարգացման ուղղությամբ հատկապես վերջին տարիներին իրականացվել են որոշ հետազոտություններ, սակայն դրանք չեն կրել համակարգային բնույթ և հետապնդել են ոլորտի առջև ծառացած առանձին խնդիրների լուծման նպատակ: Այդ տեսանկյունից ատենախոսությունը մինչև օրս հանրապետությունում իրականացված աշխատանքներից առանձնանում է դիտարկվող հարցերի ուսումնասիրության ամբողջական և համակարգային բնույթով:

Ատենախոսությունը լայնածավալ հետազոտություն է, որն ընդգրկում է զբոսաշրջությանն առնչվող գրեթե բոլոր հարցերը: Այստեղ բացահայտված են ոլորտի

զարգացման հիմնախնդիրները և մշակված են դրանց լուծմանն ուղղված մոտեցումներ: Նշվածը խոսում է Հայաստանի Հանրապետության համար ատենախոսության խիստ կարևորության, ինչպես նաև ընտրված թեմայի ***արդիականության և հրատապության*** մասին:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Հետազոտության նպատակը հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման տեսական, գործնական և հայեցակարգային հիմքերի մշակումն է:

Դրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել զբոսաշրջության զարգացման տեսական և մեթոդաբանական հիմքերը,
- գնահատել միջազգային զբոսաշրջության արդի վիճակը և զարգացման միտումները,
- ուսումնասիրել զբոսաշրջության առանձնահատկությունները և ոլորտի կառավարման ու զարգացման համաշխարհային փորձը,
- հատկանշել զբոսաշրջության վիճակը Հայաստանում, գնահատել ոլորտի կարգավորման իրավական ապահովվածությունը և կառավարման համակարգը հանրապետությունում,
- բացահայտել Հայաստանում զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնները,
- իրականացնել զբոսաշրջության զարգացման կանխատեսումներ և արժևորել ոլորտի դերը հանրապետության տնտեսությունում,
- բացահայտել ՀՀ-ում զբոսաշրջության հիմնական տեսակների զարգացման ներուժային հնարավորությունները,
- մշակել ՀՀ-ում զբոսաշրջության տեսակների երկարաժամկետ կայուն զարգացման, ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարելավման, ենթակառուցվածքների արդիականացման, զբոսաշրջությունում զբաղվածների կրթական մակարդակի բարձրացման և աշխատաշուկայի

հետ կապերի ամրապնդման ուղիներ,

- մշակել ՀՀ-ում զբոսաշրջիկների գոհունակության մակարդակի գնահատման մեթոդաբանություն:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության առաջին՝ ***«Զբոսաշրջության զարգացման տեսամեթոդական և գործնական հիմքերը»*** գլխում վերլուծվել է զբոսաշրջության էությունը, ձևերն ու տեսակները, գործառույթները, զբոսաշրջային գործունեության բաղադրիչները, ոլորտի դերն ու նշանակությունը տնտեսությունում, քննարկվել են զբոսաշրջությանն առնչվող մեթոդաբանական այլ հարցեր: Այս գլխում ներկայացվել են նաև զբոսաշրջության զարգացման համաշխարհային միտումները և ուսումնասիրվել է ոլորտի կառավարման և զարգացման միջազգային փորձը:

Աշխատանքի երկրորդ՝ ***«Զբոսաշրջությունը որպես ՀՀ տնտեսության ոլորտ»*** գլխում գնահատվել է զբոսաշրջության արդի վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում, քանակական վերլուծության գործիքակազմի օգնությամբ իրականացվել է զբոսաշրջության զարգացման հնարավոր ուղիների վերլուծություն, գնահատվել են զբոսաշրջային գործունեությունը բնորոշող հիմնական ցուցանիշների ազդեցությունն ինչպես զբաղվածության, այնպես էլ երկրի տնտեսության վրա: Ընդ որում, ստատիկ ռեգրեսիոն մոդելների օգտագործմամբ գնահատվել են ներքին զբոսաշրջության վրա ազդող գործոնները, իսկ ոլորտի զարգացման կանխատեսումների համար կիրառվել են դինամիկ մոդելներ: Աշխատանքի երկրորդ գլխում իրականացվել է նաև ՀՀ զբոսաշրջության ոլորտի կառավարման համակարգի վերլուծություն և հանրապետությունում գործող օրենսդրաիրավական դաշտի գնահատում:

Ատենախոսության երրորդ՝ ***«Զբոսաշրջության հիմնական տեսակների զարգացման նախադրյալներն ու հեռանկարները ՀՀ-ում»*** գլխում գնահատվել է հանրապետությունում զբոսաշրջության տարբեր ուղղությունների՝ կրոնական և պատմամշակութային, առողջարանային-վերականգնողական, գաստրոնոմիական և գինու, ագրո- և էկո-, սպորտային և արկածային, գիտական, կրթական, փառատոնային,

գործարար, բժշկական, քաղաքային տեսակների զարգացվածության մակարդակը, բացահատված են դրանց ռեսուրսային ներուժի ընդլայնման ուղիները և ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրները: Ատենախոսության այս գլխում մշակվել են առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ՝ հիմնվելով ՀՀ մարզերի զբոսաշրջային հիմնական վայրերի, դրանցում առկա ռեսուրսների, ինչպես նաև հեղինակի կողմից ձևավորված զբոսաշրջային հնարավոր երթուղիների վրա:

Ատենախոսության չորրորդ՝ ***«Զբոսաշրջության զարգացման հիմնական ուղիները ՀՀ-ում»*** գլխում հանրապետության զբոսաշրջության ոլորտի ռազմավարության տարածական և ներքին ու արտաքին գործոնների փոխազդեցության մատրիցաների ձևավորման նպատակով իրականացվել է SWOT վերլուծություն, ինչը թույլ է տվել ոլորտի զարգացման ռազմավարության ձևավորումն ու ընտրությունը դիտարկել նաև ուսումնասիրվող ուղղությամբ իրականացված մարքեթինգային քայլերի համատեքստում: Արդյունքում մշակվել են առաջարկություններ ոչ միայն թվային մարքեթինգի զարգացման, այլ նաև հյուրանոցային ծառայությունների որակի բարձրացման, զբոսաշրջիկների գոհունակության մակարդակի գնահատման, զբոսաշրջության ու աշխատաշուկայի միջև կապերի ամրապնդման, ինչպես նաև զբոսաշրջության ոլորտում զբաղվածների կրթական մակարդակի բարելավման ուղղություններով: Այս գլխում իրականացվել է նաև վերլուծություն՝ ուղղված Հայաստանում զբոսաշրջության կայուն և երկարաժամկետ ռազմավարություն ձևավորելու ուղղությամբ:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում.

1. Վիճակագրական մեթոդների օգնությամբ գնահատվել է ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի, նրանց կողմից ենթադրվող ծախսերի, ինչպես նաև

զբոսաշրջության ոլորտում հնարավոր պետական ներդրումների ազդեցությունը զբաղվածության, հյուրանոցային ծառայությունների ու հանրային սննդի ոլորտների գործունեության և, ընդհանրապես, տնտեսության վրա: Ընդ որում,նշված ազդեցությունը դիտարկվել է նաև ՀՀ մարզերի և Երևան քաղաքի կտրվածքով, ինչը թույլ է տալիս հանրապետության զբոսաշրջության ռազմավարությունը գնահատել նաև ըստ դրա վարչատարածքային միավորների:

2. Զբոսաշրջային հարաբերությունների մոդելավորման ժամանակակից գործիքակազմի օգնությամբ իրականցվել են ՀՀ ներքին և ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի կանխատեսումներ, գնահատվել են ներքին զբոսաշրջության վրա ազդող գործոնների ներգործության սահմանները և հիմնավորվել է հեղինակի կողմից առաջարկված մոտեցմամբ իրականցված կանխատեսումների արդյունքում ձևավորվող ցուցանիշների հավաստիությունը:

3. Մշակվել են հայեցակարգային մոտեցումներ և գործնական բնույթի միջոցառումներ՝ ուղղված ՀՀ-ում զբոսաշրջության առավել հեռանկարային ուղղությունների զարգացման ռազմավարական ծրագրերի մշակմանը, մարքեթինգային միջոցառումների իրականացմանը, հանրապետությունում զբոսաշրջության նոր երթուղիների կազմակերպմանը:

4. ՀՀ-ում զբոսաշրջային մարքեթինգային գործողությունների կատարելագործման և բրենդինգի բարելավման նպատակով զբոսաշրջության զարգացմանն ուղղված պետական ծախսերի և ներգնա զբոսաշրջությամբ պայմանավորված եկամուտների համեմատական վերլուծության հիման վրա մշակվել են համապատասխան առաջարկություններ:

5. Հայաստանում հյուրանոցային ծառայությունների որակի բարձրացման նպատակով մշակվել է մոտեցում, որը թույլ է տալիս ծառայությունների որակի հիմնական պարամետրերի հատկորոշմամբ իրականացնել դրանց գնահատում և ակնկալվող արդյունքներում կոնկրետ ծառայության կարևորության աստիճանի որոշում:

6. Մշակվել է զբոսաշրջիկների գոհունակության գնահատման կառուցակարգ, որը թույլ է տալիս ներգնա զբոսաշրջիկների շրջանում իրականացված հարցումների արդյունքում տվյալ պահի դրությամբ որոշել զբոսաշրջիկների գոհունակության

համաթիվը, իսկ Կարևորություն-Գործունեություն վերլուծության մատրիցայի միջոցով գնահատել այդ ուղղությամբ ստացված արդյունքները:

7. Մշակվել է միջոցառումների փաթեթ՝ ուղղված ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերի բարելավմանը, ոլորտի համար անհրաժեշտ հմտություններով և կիրառական կարողություններով օժտված մասնագետների պատրաստմանը, կրթական հաստատությունների ներքին և միջազգային համագործակցության ամրապնդմանը, հաստատությունների նյութատեխնիկական բազայի ընդլայնմանը, ինչպես նաև մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ոլորտի մասնավոր հատվածի կազմակերպությունների և համապատասխան կրթական կառույցների կողմից:

Ատենախոսության մի շարք գիտական արդյունքներ և առաջարկություններ օգտագործվել են Երևանի քաղաքապետարանի կողմից մշակված «Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ»-ում, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Հայաստանի պետական տնտեսագիտական և Եվրոպական համալսարանների համապատասխան ամբիոնների աշխատանքային ծրագրերում, ինչպես նաև Summer and sun տուրիստական ընկերության ու «Ավարայր» զբոսաշրջային գործակալությունում՝ նոր զբոսաշրջային երթուղիների կազմակերպման և հյուրանոցային ծառայությունների որակի բարձրացման նպատակով:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից հատկանշական են"

1. Մշակութային ժառանգության առումով Հայաստանն, անշուշտ, ունի զարգացման մեծ ներուժ: Աշխատանքում հեղինակը զբոսաշրջության պատմամշակութային և կրոնական տեսակների հիմնական ռեսուրսները դիտարկել է ամբողջ երկրի կտրվածքով: Կարծում ենք, որ այդ ուղղություններով ուսումնասիրության համար կարելի էր որևէ կոնկրետ կրոնական կառույցի կամ պատմամշակութային հուշարձանի

օրինակով ցույց տալ, որ դրանց զբոսաշրջային հայտնի դեստինացիա դառնալու հավանականությունը բավականաչափ մեծ է:

2. Արցախյան վերջին պատերազմից հետո ՀՀ զբոսաշրջային տարածքները դարձան չափազանց խոցելի: Այս հանգամանքն ունի ընդգծված բացասական ազդեցություն հանրապետության զբոսաշրջության զարգացման հեռանկարի վրա: Այդ առումով, ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը հատկապես սահմանամերձ համայնքների կտրվածքով բացահայտեր հանրապետությունում զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները և կատարեր առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ:

3. Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրության կարևոր արդյունքներից մեկը ՀՀ-ում զբոսաշրջության տեսակների զարգացման հիմնախնդիրների բացահայտումն է և դրանց լուծմանն ուղղված հայեցակարգային մոտեցումների և գործնական միջոցառումների մշակումը:Սակայն զբոսաշրջության այնպիսի տեսակների վերլուծությունն, ինչպիսիք են գործարար, փառատոնային, բժշկական, արկածային, կրթական, գիտական տեսակները, հեղինակը հանդես է բերել սահմանափակ անդրադարձ, ինչը, մեր կարծիքով, չի ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ և հիմքեր նշված ուղղություններով ռազմավարական ծրագրեր մշակելու համար:

4. Աշխատանքի կարևոր արդյունքներից է նաև ՀՀ-ում զբոսաշրջային նոր երթուղիների ձևավորման վերաբերյալ առաջարկությունը:Սակայն դրանք կներկայանային առավել հիմնավորված, եթե հեղինակը յուրաքանչյուր մարզի օրինակով դիտարկեր առաջարկվող երթուղու հիմնական գրավիչ կողմերը, կապված մարշրուտի բնական և պատմամշակութային վայրերի, դրանցում զբոսաշրջիկների հնարավոր ժամանցի ձևերի ու ծախսերի, ենթակառուցվածքների, ինչպես նաև նրանց այլ հետաքրքրությունների հետ:

5. Աշխատանքում մշակված են զբոսաշրջության կրթության կազմակերպմանը և այդ ուղղությամբ աշխատաշուկայի զարգացմանն ուղղված առաջարկությունների փաթեթ: Կարծում ենք, որ վերջինիս արդյունավետությունն էականորեն կմեծանար, եթե այդ փաթեթը ներկայացվեր միջդիսցիպլինար մասնագիտական կրթական ծրագրի տեսքով, որտեղ հաշվի կառնվեին զբոսաշրջության կառավարման գործընթացի, դրա

տնտեսագիտական, աշխարհագրական, ճարտարապետական, պատմամշակութային և այլ ուղղություններին բնորոշ առանձնահատկությունները: Դա թույլ կտար առավել ճկունորեն արձագանքել աշխատաշուկայի պահանջներին և ոլորտը համալրել բարձր որակավորում ունեցող մասնագետներով:

6. Ուսումնասիրությունում հեղինակն իրավացիորեն պնդում է, որ զբոսաշրջությունը ՀՀ-ի համար ունի էական նշանակություն և հանրապետությունում տնտեսության այդ ուղղության զարգացման համար ըստ նրա անհրաժեշտ է իրականացնել համակողմանի քայլեր: Մասնավորապես, հեղինակի կողմից որպես այպիսի քայլեր են համարվում <<կայուն զբոսաշրջության>>, <<կայուն շինարարության>>, <<կայուն սպառման և արտադրության>> և այլնի ապահովումը: Այս առումով, ցանկալի կլիներ, եթե առավել խորությամբ պարզաբանվեր դրանց էությունը և ներկայացվեին իրականացման մեխանիզմները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արժանիքները: Դրանք հետապնդում են հանրապետությունում զբոսաշրջության ոլորտի զարգացմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Գ. Թովմասյանի ատենախոսությունն ունի գիտագործնական արժեքավոր նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Հետազոտության արդյունքները և աշխատանքում և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ուղղված մշակումներում ու առաջարկություններում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են: Աշխատանքի սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում հետազոտության կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Գ. Թովմասյանի <<Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում>> թեմայով ատենախոսությունը համապատասխանում է <<Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 6-րդ և 8-րդ կետերի, ինչպես նաև դոկտորական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 <<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Վ. Բ. Բոստանջյան
22.11.2022թ.

Պարոն Վ. Բոստանջյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Վ. Հովհաննիսյան
22.11.2022թ.